



**«Նոր ժամանակի
կրթություն» ՀԿ**

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ**

*Հետազոտության թեման՝ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՄ
ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԴԱՍՏԻՎՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ*

Առարկան՝ Կենսաբանություն

Հետազոտող ուսուցիչ՝ Արեգնազ Էփոյան

*Ուսումնական հաստատություն՝ Արավերդու թիվ 2 հիմնական
դպրոց*

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Գլուխ 1. Դեռահասների բնապահպանական գործունեության հոգեբանական կառուցվածքը.....	5
Գլուխ 2. Սովորողների էկոլոգիական մշակույթի ձևավորումը.....	8
Գլուխ 3. Քարոզչական աշխատանքի ձևերը.....	12
Գլուխ 4. Էկոլոգիական կրթության համակարգի կառավարման մանկավարժական պայմանները	14
Գլուխ 5. Էկոլոգիական նյութի ուսուցման մեթոդները.....	20
Գլուխ 6. Էկոլոգիական կրթության արտասուսումնական արտադպրոցական ձևերը.....	22
Եզրակացություն.....	23
Գրականության ցանկ.....	24

Ներածություն

Աճող սերնդի էկոլոգիական դաստիարակությունն ու կրթությունը, բնակչության էկոլոգիական լուսավորությունն այսօր դարձել է ժամանակակից հասարակության և դպրոցի խնդիրներից մեկը, որի լուծումը ենթադրում է էկոլոգիական գիտելիքների ձևավորում, բնապահպանական ընդունակությունների զարգացում:

Այդ գործընթացի իրականացումը հնարավոր է միայն այ դեպքում, եթե այն հիմնվում է էկոլոգիական կրթության նկատմամբ արժեքային կողմնորոշումների վրա:

Ն. Ս. Դեժնիկովան գրում է. «Դաստիարակության գլխավոր գործառույթը երիտասարդներին նախորդ սերնդի կողմից կուտակված մշակութային արժեքների փոխանցումն է և մշակութային փորձի ձևավորմանը յուրաքանչյուրի մասնակցությունը, որը էկոլոգիական առումով «խախտվում է» անձի կողմից շրջակա միջավայրի հետ նրա փոխազդեցության գործընթացում ճանաչողական, հուզագայական, նորմատիվային մակարդակներում»:

Արդի փուլում աշխարհի էկոլոգիական իրավիճակը բնութագրվում է որպես օրեցօր աճող վտանգ մարդկության գոյության նկատմամբ: Այդ իսկ պատճառով առաջին պլան են մղվում էկոլոգիական կրթության բովանդակության երեք բաղադրիչները, որպեսզի մարդը հոգեբանորեն պատրաստ լինի ցանկացած ոլորտում էկոլոգիական նպատակահարմար վարքի և գործունեության:

Էկոլոգիական գիտելիքներն ունեն մի քանի տեսանկյուն՝ **գիտական, սոցիալական, բարոյական, գեղագիտական, իրավական**: Սակայն ընդհանուր էկոլոգիական գիտելիքների համակարգում փիլիսոփայահասարակական և կենսաբանական գիտությունների համակցման արդյունքում հստակ ուրվագծվում է նոր գիտություն՝ սոցիալական էկոլոգիան:

Ուսուցիչը պետք է իմանա, թե ինչու որոշ երեխաներ բնությանը վերաբերվում են մեծ հետաքրքրությամբ և սիրով, իսկ մյուսներն իրենց այլ կերպ են դրսևորում:

Ինչպե՞ս է ազդում բնության հանդեպ զգայական և գիտակցական վերաբերմունքը բնապահպանական գործունեության վրա: Այս հարցերը ցույց են տալիս հիմնախնդրի բարդությունը, որը ընդգրկում է նաև մանկավարժության հոգեբանության ոլորտները: Եվ այսօր արդիական են հնչում Ուշինսկու խոսքերը. «Տարօրինակ է, որ բնության դաստիարակչական ներգործությունը այդքան քիչ է գնահատվում մանկավարժության մեջ»: Այսինքն՝

**Բնության նկատմամբ մարդու մեջ պատասխանատու վերաբերմունքի
դաստիարակումը կրթական համակարգի գործունեության հիմնական նպատակն է:**

Եվ ելնելով այս դրույթից պետք է ձևավորել էկոլոգիական կրթության այնպիսի համակարգ, որը միտված լինի ազատ մտածող և ստեղծագործող, բնության և սոցիալական երևույթների մեջ կողմորոշվող, իրեն այդ բնության մի մասնիկը զգացող մարդու դաստիարակմանը:

Էկոլոգիական դաստիարակության համար տարբեր մանկավարժական խմբեր ձևավորել են գաղափարներ, որոնք դիտարկվեցին հետևյալ տեսանկյուններով:

- Էկոլոգիական կրթության և դաստիարակության ինտեգրացում:
- Անձի էկոլոգիական մշակույթի զարգացում, կառավարում:
- Էկոլոգիական կրթության հաջորդականության և համալիրության սկզբունքների հաշվառում:

Բնության նկատմամբ աշակերտների խնայողական վերաբերմունքի ձևավորման համար անհրաժեշտ է բացահայտել բնության արժեքային բնույթը, նրա դերը մարդու կյանքում:

Գլուխ 1

Դեռահասների բնապահպանական գործունեության հոգեբանական կառուցվածքը

Քանի որ հիմնական դպրոցում աշակերտները դեռահասության փուլում են գտնվում, տվյալ դեպքում դեռահասների հետ աշխատանքի ընթացքում պետք է ճիշտ գնահատել տվյալ տարիքային խմբի ֆիզոլոգիական, հոգեբանական և սոցիալական առանձնահատկությունները:

Դեռահասների բնապահպանական գործունեության հոգեբանական կառուցվածի հիմնական բաղադրիչներն են

- 1.բնապահպանական պահանջմունքները,**
- 2.բնաճանաչողական դրդապատճառները,**
- 3.բնաճանաչողական ունակությունները,**
- 4.էկոլոգիական գիտակցությունը,**
- 5.էկոլոգիական գիտելիքները,**
- 6.բնաճանաչողական և բնապահպանական գործողությունը,**
- 7.բնապահպանական աշխատանքների, էկոլոգիական գիտելիքների գնահատումը և վերահսկողությունը:**

1.Բնապահպանական պահանջմունքը ենթադրում է ակտիվ շփումը բնության, շրջակա միջավայրի հետ, օրինաչափությունների և օբյեկտիվ օրենքների իմացություն:

2. Բնաճանաչողական դրդապատճառները կապված են դեռահասի հասարակական դիրքորոշման և պահանջմունքների հետ, հանդես են գալիս որպես ուսումնական գործունեության արդյունք: Բնաճանաչողական գործունեության գիտակցված դրդապատճառները և նպատակները պետք է հենվեն այն օբյեկտի վրա, որի վրա տարածվում է գործունեությունը:

3.Բնաճանաչողական ընդունակությունների ձևավորման հիմքը ընդհանուր ճանաչողական գործընթացն է, որն սկսվում է զգացումով և ընկալումով, որոնք և շրջապատող աշխարհի մասին մարդու գիտելիքների միակ աղբյուրն են:

Դպրոցականների բնաճանաչողական ընդունակությունները ասելով՝ պետք է հասկանալ շրջակա միջավայրում, բնության մեջ իրեն ճիշտ դրսևորելու և նրա ճիշտ օգտագործման ունակությունը՝ այնպիսի առաջադրանքների կատարումով, որոնք տրվում են էկոլոգիական

գիտելիքների որոշակի շրջանակ ունեցող որոշակի տարիքի սովորողներին: Կարելի է առանձնացնել բնաճանաչողական և բնապահպանական ունակությունների հետևյալ հատկանիշները:

- Էկոլոգիական մտածողությունը, որն ի հայտ է գալիս բնապահպանական և բնաճանաչողական խնդիրները հասկանալու և նրանց ստեղծագործական լուծում տալու ժամանակ:
- Դիտողականությունը, որը դրսևորվում է էկոլոգիական բնույթի տարբեր տիպի խնդիրների և առաջարկությունների ընկալման և կատարման ժամանակ:
- Բնության պահպանման և վերարտադրման ստեղծագործական երևակայությունը:

Էկոլոգիականը գեղագիտականի, տնտեսականի, իրավականի սոցիալականի հետ համակցելու ունակությունը:

4.Էկոլոգիական գիտակցության առանձնահատկությունը այն է, որ այն պետք է դառնա ժամանակակից մարդկանց գործունեության ու վարքի կարգավորիչը, որի շնորհիվ էլ վերջ կդրվի բնությունից առավելագույնս շահույթ ստանալու և սպառողական վերաբերմունքին և հիմք կծառայի հասարակության ու բնության փոխհարաբերության մեջ անձի ինքնադրսևորման համար:

5.Էկոլոգիական գիտելիքները սովորողները ձեռք են բերում տարբեր առարկաների բովանդակության յուրացման և միջառարկայական կապերի ապահովման, հարաբերությունների ձևավորման, զարգացման միջոցով: Դրանք բավականին բարդ համակարգ ունեն և հիմնված են էկոլոգիական հասկացությունների յուրացման ու աշխարհի գիտական պատկերի իմացության վրա:

6.Բնաճաչողական բնապահպանական գործողությունների առանձնահատկությունն այն է, որ նրանք էկոլոգիական կրթության կարևոր բաղադրամասերն են, որոնց միջոցով սովորողները ձեռք են բերում բնության արժևորման, նրա նկատմամբ պարտքի ու պատասխանատվության որակները:

7.Էկոլոգիական կրթության գործընթացում չափազանց կարևորվում է սովորողների բնապահպանական գործունեության արդյունքների նկատմամբ վերահսկողությունը և գնահատումը՝ որպես կառավարման կարևորագույն գործառույթներ: Դրանք իրականացնում են ուսուցիչները, արտադպրոցական հիմնարկները, ծնողները և ընդհանրապես հասարակությունը:

Ելնելով վերոնշյալից՝ կարելի է որոշակիացնել հիմնական դպրոցի սովորողների էկոլոգիական կրթության հետևյալ հիմնական առանձնահատկությունները:

1. Կրտսեր տարիքում իրականացվող հասարակական գործունեությունը՝ ուսումնական գործունեությունը, դեռահասության շրջանում վերածվում է բնապահպանական հասարակայնորեն օգտակար գործունեության:

2. Դպրոցականից պահանջվում է բնության մեջ որոշակի վարքագծի դրսևորում, որին պետք է ենթարկվեն նրա մտածողությունը, աշխարհայացքային ըմբռնումը, հոյզերը, կամքը և այլն:

3. Միջին դասարաններում է սկսվում կենսոլորտի համակարգված ուսումնասիրումը, որը ենթադրում է էկոլոգիական հասկացությունների, գիտելիքների ձևավորում, միաժամանակ դեռահասները գործնական մասնակցություն են ունենում բնության պահպանության աշխատանքներին:

4. Բնապահպանական գործունեության ընթացքում դպրոցականը ճանաչում է բնության և հասարակության հետ ունեցած իր հարաբերությունների բնույթը, այդ գործունեությանը զուգընթաց սովորողների մեջ ձևավորվում են հոգեկան նոր որակներ, որոնք անխզելիորեն կապված են մտավոր և բարոյական որակների ձևավորման հետ:

5. Դեռահասների բնանախաղական-հասարակական գործունեության ընթացքում ձևավորված մտավոր և բարոյական որակները դառնում են նրանց վարքի կարգավորիչ նորմեր, որոնց հիման վրա ձևավորվում է անձի այնպիսի էկոլոգիական գիտելիքների համակարգը, որոնք աշխարհայացքում դրսևորվում են հայացքների և սկզբունքների ձևով:

Գլուխ 2

Սովորողների Էկոլոգիական մշակույթի ձևավորումը

Մշակույթը՝ որպես բազմապլան հասկացություն, ներառում է համամարդկային մշակույթը, իսկ Էկոլոգիական մշակույթը դառնում է մարդու գոյության միջոց, նրա կենցաղի, բնության նկատմամբ նրա վերաբերմունքի չափանիշ:

Էկոլոգիական մշակույթը բազմաչափ, ամբողջական համակարգ է, որի բաղադրիչներն են

- Բնագիտական և Էկոլոգիական գիտելիքների համակարգը,
- Էկոլոգիական գիտակցությունը
- Էկոլոգիական աշխարհայացքը,
- Էկոլոգիական գործունեությունը,
- Էկոլոգիական պատասխանատվությունը,
- Իմացության համագիտական, բնագիտական մեթոդների համակարգը,
- Էկոլոգիական մտածողությունը,
- Էկոլոգիական ինքնագիտակցությունը և Էկոլոգիական հիմնախնդիրների լուծման մեջ ստեղծագործական ինքնիրացումը:

Վ. Վ. Մատվենը գրել է. «Էկոլոգիական մշակույթը, ինչպես նաև մշակույթի այլ տեսակները մարդու կողմից Էկոլոգիական կրթության ոլորտում ստեղծած գիտելիքների, կարողությունների, հմտությունների համակարգի, ինչպես նաև Էկոլոգիական գործունեության որոշակի փորձի հիման վրա նյութական և հոգևոր արժեքների ամբողջությունն է»:

Օգտվելով Վ.Վ. Մատվենի բնորոշումներից կարելի է առանձնացնել Էկոլոգիական մշակույթի հետևյալ առանձնահատկությունները

- Էկոլոգիական մշակույթը նախ և առաջ հասարակական մշակույթ է, որն արտահայտվում է բնության՝ որպես բարձրագույն արժեքի հանդեպ պատասխանատու վերաբերմունքով,
- Էկոլոգիական մշակույթը հասարակության առանձին շերտերի և խմբերի մշակույթ է,
- Էկոլոգիական մշակույթը որոշակի անձանց՝ սովորողների, մանկավարժների, ծնողների և այլնի մշակույթն է:

Ա.Վ. Սախնուն էկոլոգիական մշակույթի հիմքը համարում է գրագետ, գիտակից վարքի՝ հասարակության բարոյական և գեղագիտական նորմերին համապատասխան գործունեություն ծավալելու գործում անձի պատրաստակամությունը, իսկ նրա կարևոր չափորոշիչը, Ի. Գ. Չվերևի կարծիքով, համարվում է օրենքների, կարգադրությունների և արգելքների ամբողջությունը, որը կարգավորում է մարդու և բնության փոխհարաբերությունները:

Կ. Ստոշկուսը սահմանել է էկոլոգիական մշակույթի հետևյալ տեսանկյունները՝

Էկոլոգիական իրավիճակ, էկոլոգիական վարք, էկոլոգիական գիտակցություն:

Էկոլոգիական մշակույթի էությունը հետևյալն է. հանդիսանալով անձի հասարակական մշակույթի մի մասը՝ էկոլոգիական մշակույթը մի շարք փոխկապակցված տարրերից կազմված ամբողջական համակարգ է.


ա) գիտելիքների համակարգից՝ բնագիտական, արժեքային, նորմատիվային գործնական, բ) էկոլոգիական մտածողությունից , որը ներառում է պատճառահետևանքային, հավանական, կանխատեսական և այլ տեսակների կապերի բացահայտումը, գ) համոզմունքների համակարգից, որն արտացոլում է էկոլոգիական մշակույթի աշխարհայացքային մակարդակը,

դ) գործնական ունակությունների և հմտությունների համակարգից, որը բնորոշում է պրակտիկ գործունեության մակարդակը,

ե) էկոլոգիապես արդարացված վարքից, որը բնութագրում է էկոլոգիական գիտելիքների, մտածողության, ամենօրյա գործունեության նորմայի փոխարկման աստիճանը, գ) էկոլոգիական հիմնախնդիրների լուծման ակունքների էության և ուղիների գիտակցումից, բարոյական ընտրության և կանխատեսման իրավիճակներում որոշումների կայացումից:

Եվ ըստ վերոնշյալի

Էկոլոգիական աշխարհայացքը պետք է սահմանել որպես շրջապատող աշխարհի, նրանում մարդու տեղի, «մարդ – շրջապատող աշխարհ » համակարգում հնարավոր կապերի մասին գիտելիքների ընդհանրացված համակարգ, որը փոխանցվում է գործողությունների ներքին պլանհայացքների, համոզմունքների, գաղափարների տեսքով: Սովորողների էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման վրա ազդող գործոններ



Ա. Ն. Չախլեբնին առանձնացնում է շրջապատող միջավայրի նկատմամբ դպրոցականների պատասխանատու վերաբերմունքի արտահայտման երեք ոլորտ՝

Անհատական վարքի մշակույթ, շրջապատող միջավայրի պահպանության, խնամքի, բարելավման, հասարակական օգտակար աշխատանքի կատարման մեջ ակտիվ մասնակցություն, բնության պահպանության վերաբերյալ ժամանակակից գաղափարների քարոզում, մասնագիտական աշխատանքում էկոլոգիական մշակույթի սկզբնավորում:

Իմ կարծիքով դպրոցականների էկոլոգիական մշակույթի ձևավորման և էկոլոգիական կրթության գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները

1. սովորողներին ցույց տալ, որ բնության մեջ ամեն ինչ փոխկապակցված է,
2. նրանց գիտակցությանը հասցնել, որ այդ կապերի խախտումը և՛ բնության, և՛ մարդու համար կարող է անդառնալի, կործանարար հետևանքներ ունենալ,
3. օգնել նրանց ճիշտ դրսևորելու սեփական վարքը բնության մեջ:

Բնացի դրանից պետք է նաև սովորողների էկոլոգիական մշակույթի ձևավորման աշխատանքների բովանդակության մեջ առանձնացնել հետևյալ գործոնները

ա) Ճանաչողական

բ) գործունային

գ) գեղագիտական –գգացմունքային

դ) արժեքանական

ե) երկրագիտական

զ) անձնային

է) տնտեսագիտական-իրավական

ը) սիներգետիկական-բնական

Գլուխ 3

Քարոզչական աշխատանքի ձևերը

Էկոլոգիական կրթությունն իրականացնելու համար կարելի է օգտվել միջոցներից, որպեսզի բարձրացնենք ուսուցման արդյունավետությունը.

Աշխատանքի ձևը	Աշխատանքի նպատակը
Էկոժամանակագրությունը	Տեղեկատվություն հավաքելու գործը դպրոցականներին սովորեցնում է հետևել պարբերական մամուլին, դիտել հեռուստահաղորդումներ, օգտվել համացանցից. Նպաստում է աշխարհում էկոլոգիական իրադարձությունների մասին տեղեկացվածությանը, ինչպես նաև լայնացնում և խորացնում է սովորողների ընդհանուր և էկոլոգիական մտահորիզոնը:
Ցուցավահանակներ	Բնապահպանական թեմաներով ցուցավահանակների մշակումն ու պատրաստումը նպաստում է ճիշտ արժեքային կողմնորոշումների ձևավորմանը և շրջապատող բնական միջավայրի հանդեպ պատասխանատու վերաբերմունքին, ցուցավահանակների ձևավորման մրցույթները դպրոցականներին հնարավորություն են տալիս արտահայտել իրենց վերաբերմունքն էկոլոգիական հիմնախնդիրների հանդեպ:
Ստեղծագործական ցուցահանդեսներ	Նպաստում է շրջապատող միջավայրի հանդեպ հուզական-անձնային վերաբերմունքի ձևավորմանը, էկոլոգիական մշակույթի բարոյական հիմքերի մշակմանը:
Էկոլոգիական տասնօրյակներ, շրջակա միջավայրի օր, շաբաթ, էկոլոգիական միամսյակ	Նպաստում է էկոլոգիայի վերաբերյալ տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքների խորացմանը և ընդլայնմանը, հետաքրքրություն են առաջացնում առարկայի և այն ուսումնասիրելու, ինքնուրույն աշխատանքի, ստեղծագործելու հանդեպ, զարգացնում են էկոլոգիական գաղափարներ քարոզելու կարողությունը, հնարավորություն են տալիս համատեղել դպրոցի և հասարակության ջանքերը

	Էկոլոգիական կրթության գործում:
Համաժողովներ	Նպաստում են էկոլոգիական գիտելիքների և գազափարների քարոզչությանը:
Դասախոսություններ, հանդիպումներ էկոլոգների, տնտեսագետների, իրավաբանների հետ	Նպաստում է բնօգտագործման տնտեսական և իրավական հարցերի իմացությանը:

Գլուխ 4

Էկոլոգիական կրթության համակարգի կառավարման մանկավարժական պայմանները

Սովորողների էկոլոգիական պատրաստության մակարդակն էապես բարելավվում է միայն որոշակի պայմանների ապահովման դեպքում: Դրա համար կարող ենք առանձնացնել պայմաններ, որոնց մեջ են մտնում

1. Հասարակության սոցիալական պատվերը, որը որոշվում է երկրի զարգացման էկոլոգիական-տնտեսական առանձնահատկություններով:
2. Բազմամարդկային միջավայրային մոտեցումը:
3. Էկոլոգիական կրթության բովանդակության իրականացման գործընթացում միջառարկայական կապերի կիրառումը:
4. Էկոլոգիական կրթության կազմակերպման տեխնոլոգիական հազեցվածությունը:
5. Էկոլոգիական թեմաներով մշակված ուսումնական տարբերակված առաջադրանքների հատուկ համալիրի կիրառումը:
6. Ուսումնական առաջադրանքների ինքնուրույն կիրառումը էկոլոգիայի բովանդակության արդյունավետ յուրացման նպատակով:
7. Էկոլոգիական բովանդակությամբ իրականացվող դասերի մոդելավորում:
8. Գործնական խաղերի և աշխատանքների, էքսկուրսիաների կազմակերպումը:
9. Դպրոցական կոլեկտիվում բարենպաստ ստեղծագործական մթնոլորտի ստեղծումը:
10. Ուսուցչի՝ դպրոցականների մեջ բարենպաստ մշակույթ և բնապահպանական հմտություններ ձևավորելու կարողությունը և այդ բնագավառում նրա բանիմացությունը:
11. Բնական հարստությունների պահպանման, վերականգնման, վերստեղծման և կրկնապատկման ուղղությամբ դպրոցականների ակտիվ դիրքորոշման ձևավորումը:
12. Բնապահպանական գործնական աշխատանքներում սովորողների բարոյագեղագիտական, հուզականային բաղադրիչների ուժեղացումը:
13. Ուսումնական գործընթացում երկրագիտական աշխատանքների ակտիվացումը:

Ըստ Մ. Ա. Դուրանովայի՝ մանկավարժական պայմաններն այն միջավայրն է, որտեղ իրականացվում են գործոնները, այն հանգամանքները, որոնցով պայմանավորված են այդ գործոնները:

Գործոններ ընդունված է անվանել դիդակտիկական գործընթացի և այդ գործընթացի արդյունքների վրա ազդող պատճառները:

Էկոլոգիական կրթության մանկավարժական պայմանները բնության մասին Էկոլոգիական գիտելիքների, բնության պահպանման և զարգացման ուղղությամբ սովորողների ձեռք բերած կարողությունների, հետաքրքրությունների և զգացմունքների ձևավորման գործընթացն ապահովող տեխնոլոգիաների և հանգամանքների ամբողջությունն է:

Էկոլոգիական կրթության բովանդակությունը մեթոդական համակարգի կառուցվածքային բաղադրիչներից մեկն է՝ այն փաստացի նյութը և տեսական դրույթները, որոնք պետք է յուրացվեն սովորողների կողմից:

Մեթոդական համակարգը բովանդակության, տեխնոլոգիայի, ռեսուրսային ապահովման, գնահատման գործիքների ամբողջական միասնությունն է, որը կազմում է սովորողների և ուսուցչի գործունեության կազմակերպման և իրականացման ալգորիթմը որևէ առարկայի դասավանդման բնագավառում(օրինակ կենսաբանության, քիմիայի և այլն):

Գնահատման գործիքները ցույց են տալիս, թե ինչպես է ստացվելու սովորողի կարողունակության ապացույցը: Գնահատման գործիքներից կարող են լինել թեստերը, հանձնարարությունները, նախագծերը, որոնց կատարման չափանիշների բավարարումը աշակերտի կողմից ցույց է տալիս նրա գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակը:

Իսկ գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման եղանակները ներառում են վերլուծելու, համադրելու, հակադրելու, վերացարկելու, մոդելավորելու և այլ մտավոր ունակությունները: Յուրաքանչյուր սովորող ուսման մեջ հաջողության կհասնի, եթե դասի ընթացքում տարբերակված աշխատանքներ կազմակերպվեն՝ հաշվի առնելով նրանցից յուրաքանչյուրի անհատական առանձնահատկությունները:

Վերլուծական, համադրական գործունեություն ծավալելու կարողության համեմատական բարձր մակարդակով է պայմանավորվում այլ հնարների տիրապետման կարողության համեմատաբար բարձր զարգացումը, և հակառակը՝ վերլուծական և համադրական հնարների զարգացման ցածր մակարդակին համապատասխանում է համեմատության,

ընդհանրացման, վերացարկման, կոնկրետացման հնարների զարգացման առավել ցածր մակարդակ:

Ըստ Ն. Ի. Շորինայի մշակած գիտելիքների դասակարգման հիմքում դրված են կենսաբանաէկոլոգիական և սոցիալ-էկոլոգիական կապերը: Առանձնացվում են կենսաբանաէկոլոգիական կապերի ուղղությամբ հետևյալ գիտելիքները՝

- Գիտելիքներ կենդանի և անկենդան բնության միջև գոյություն ունեցող կապերի մասին
- Գիտելիքներ կենդանի բնության ներքին կապերի մասին
- Գիտելիքներ կենդանի բնության և մարդու միջև եղած կապերի մասին:

Իսկ Ի.Ն. Պոնոմարյովայի աշխատության համաձայն էկոլոգիական գիտելիքների համակարգը կենսաբանության դասընթացում իր մեջ ընդգրկում է էկոլոգիական հասկացությունների հինգ շարք

- Հասկացություն միջավայրի և միջավայրի գործոնների մասին,
- Հասկացություն օրգանիզմների էկոլոգիայի մասին,
- Պոպուլյացիոն էկոլոգիական հասկացություններ,
- Կենսատերկրացենոզային հասկացություններ
- Սոցիալ-էկոլոգիական հասկացություններ:

Պետք է ընդգծել նաև, որ էկոլոգիական գիտելիքների հետ մեկտեղ պետք է ունենալ նաև էկոլոգիական կարողություններ:

Ըստ Ի.Տ. Սուրավեզինայի **էկոլոգիական կարողությունը բնութագրվում է որպես էկոլոգիական հեռանկար տեսնելու, գնահատելու, բնական օբյեկտի նկատմամբ խնամք տանելու կարողություն:**

Կարողություններն է դասակարգվում են հետևյալ խմբերի մեջ

1. Ճանաչողական կարողություններ.

- Գիտելիքների ինքնուրույն ձեռքբերում,
- Ուսումնական և գիտահանրամատչելի գրականության ուսումնասիրում
- Բնության մեջ ընթացող գործընթացների դիտում և դրանց հիման վրա եզրակացությունների կատարում,
- Երևույթների և դիտարկվող փաստերի բացատրում, ունեցած տեսական գիտելիքների հիման վրա բնական օբյեկտների նկարագրում, դրանց հատկանիշների թվում, օբյեկտների համեմատում, պարզ եզրակացությունների և

ընդհանրացումների կատարում, բնության մեջ դիտարկված նյութերի և երևույթների միջև գոյություն ունեցող պատճառահետևանքային կապերի բացատրում,

- Էկոլոգիական իրավիճակի գնահատում:

2. Գործնական կարողություններ

- Չափիչ սարքավորումներից օգտվելու կարողություն
- Բնության պահպանության կոլեկտիվ և անհատական աշխատանքների պլանավորում և կատարում,
- Բնության մեջ վարքի կանոնների պահպանում:

3. Կազմակերպական կարողություններ

- Աշխատանքի պլանավորում, բնության օբյեկտների դիտարկումների ճիշտ կազմակերպում:

4. Էկոլոգիական բովանդակությամբ խնդիրների նախապատրաստման ինքնաստուգման կարողություններ:

Էկոլոգիական կրթության նպատակը ճանաչողական և ստեղծագործական հետաքրքրությունների ձևավորումն է:

Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս Էկոլոգիական կրթության կառուցվածքային բաղադրիչները՝ Էկոլոգիական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և այլն:


Թիվ	Թեմա	Էկոլոգիական կրթության բովանդակության կառուցվածքային բաղադրիչները		
		Էկոլոգիական գիտելիքներ (թեմայի հիմնական հասկացությունները)	Էկոլոգիական կարողություններ, որոնք վերաձվում են հմտությունների	Էկոլոգիական հմտություններ

1	Կենսաբանությունը որպես գիտություն, նրա բաժինները	Օրգանիզմներ, որոնք կազմում են կենդանի բնությունը, երկրագնդի բուսական ծածկը (բուսաբանություն, կենդանաբանություն)	Կարողանալ օգտագործել կենսաբանության բաժինների նյութը	Ձևավորել կողմնորոշվելու ունակությունը
2	Բույսերի նշանակությունը երկրագնդի վրա, բույսերի բազմազանությունը	Վայրի, մշակովի, սննդային, տեխնիկական բույսեր, արգելոցներ, բուսաբանական այգիներ, ծառեր, նրանց յարուսայինությունը (հարկայինությունը)	Կարողանալ տարբերել բույսերի տեսակները	Բնությունը որպես հավերժ գեղեցկության սկիզբ և եզակի արժեք
3	Բույսերի օրգանների բջջային կառուցվածքը	Մանրադիտակ, խոշորացնող այլ սարքեր, բջիջ, նրա բաղադրիչներ և օրգանոիդներ, հյուսվածքներ տեսակները, բջիջների բաժանումն ու աճը	Կարողանալ օգտվել խոշորացնող սարքերից, պատրաստել պրեպարատներ դիտարկման համար	Կենդանի օրգանիզմների անկրկնելիության ճանաչումը
4	Սերմերի կառուցվածքն ու ծլելը	Սերմերի մեջ եղած նյութերը Սպիտակուցներ, ճարպեր, ածխաջրեր, սերմերի ծլունակությունը, պահպանումը, ջերմասեր և ցրտադիմացկուն բույսեր	Կարողանալ ճիշտ պահպանել սերմերը և սերմերից բույսեր աճեցնել	բացատրել սերմերի անհրաժեշտությունը տեսակի պահպանման և տարածման գործում
5	Արմատ Բույսի կյանքի համար անհրաժեշտ	Արմատային և օսմոտիկ ճնշում, սնուցում արմատներով, արմատային շնչառություն, տեսակները, գոտիները, ձևափոխությունները	Կարողանալ ճիշտ տարբերակել խմբավորումները, բացատրել արմատով բազմացման	Արմատների օգտագործումը որպես բնության բարիք

	օրգան		առանձնահատկությունը	
6	Հողը որպես վերին պտղատու շերտը, հողի պահպանութիւնը	Հողի շերտը, ձևերը, պարարտացում, հումուս, աղակալում, ճահնացում, հողերի բարելավում	Կարողանալ գնահատել հողագոյացման և հողապահպանման ռիսկերը, պրոցեսը	Առաջարկել շրջակա միջավայրի պահպանման միջոցառումներ
7	Կեղև ընձյուղի մաս	Տերևի կազմություն, ջղավորություն, տերևադասավորությունը, ֆոտոսինթեզ, տերևաթափ	Տարբերակել տերևները, ջղավորությունը, դասավորությունը, բացատրել քլորոֆիլի գործառույթը, տեսակները	Գիտակցել կանաչ բույսերի դերն ու նշանակությունը
8	Ծաղիկ և պտուղ	Ծաղկի կառուցվածքը, ծաղկաբույլ, փոշոտում, պտղի, սերմի առաջացում, տարածում	Իմանա ծաղկի կառուցվածքը, պտուղների և սերմերի կառուցվածքն ու ձևերը	Գիտակցել պտուղների և սերմերի նշանակությունը որպես սնունդ
9	Ցողուն, նրա գործառույթները	Ցողունի կառուցվածքը, անը երկարությամբ և լայնությամբ, տարեկան օղակներ, նյութերի տեղափոխումը ցողունով	Ծառերի տարիքի որոշումը տարեկա օղակներով, լուբային թելիկների մաղանման խողովակների աշխատանքի դիտում	Ներկայացնել ցողունների նշանակությունը բույսի և շրջապատի համար
10	Բույսերը որպես կենդանի օրգանիզմներ	Բույսերի հիմնական կենսական գործառույթները, էներգիայի փոխակերպումը, նաստիաներ, տրոպիզմներ, արմատային և գագաթային ան	Իրականացնել բույսի անն ու բազմացումը՝ հաշվի առնելով լույսը, խոնավությունը, ջերմաստիճանը և այլն	Բնության պահպանության վարքի և կուլտուրայի դաստիարակում:

Գլուխ 5

Էկոլոգիական նյութի ուսուցման մեթոդները



Ուսուցման մեթոդները կատարում են մի շարք գործառույթներ

- * Ուսուցողական- ճանաչողական
- * Դաստիարակչական
- * Չարգացնող
- * Կառավարող
- * Էվրիստիկ-ստեղծագործական
- * Փոխներգործուն

Էկոլոգիական նյութի ուսուցման պրոցեսում աշակերտների մոտ պետք է ձևավորել գիտական հասկացություններ և այդ գիտական հասկացությունները աշակերտների սեփականությունը դարձնելու համար անհրաժեշտ է

* Աշակերտներին բացատրել տվյալ հասկացության գործնական նշանակությունը

* Նրանց համար ստեղծել սեփական հետազոտությունների միջոցով հարցի կարևորությունը բացահայտելու հնարավորություն:

* Հասկացությունների ընկալման համար հաշվի առնել սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները:

* Կարևոր է նաև տարբեր տարիքային խմբերի համար ընտրել տարիքին համարժեք թեմայի ուսումնասիրումը:

* Անհրաժեշտ է նաև «Կարմիր գրքի» հեղինակների կողմից առաջ քաշված խորհուրդներին հետևելը: Դրանք են՝

1. Տեսակի լրիվ պահպանումը, բույսերի անձեռնամխելիությունը և պահպանումը արեալի ամբողջ սահմանում: Պահպանումը պետք է լինի համալիր:

2. Մշտական կամ ժամանակավոր արգելոցների ստեղծում՝ անհետացող տեսակի պոպուլյացիայի թվաքանակի վերականգնման և նրա պահպանության նպատակով:

3. Սննդային և դեղորայքային բույսերի հավաքման սահմանափակում և նրանց պահածոյացման համար թուլտվություն:


4. Հազվագյուտ աճող վայրի բույսերի հավաքման արգելում և վաճառք մասնավոր անձանց կողմից:

5. Բուսաբանների կողմից մշտական վերահսկողության կազմակերպում բույսերի հազվագյուտ և անհետացող տեսակների առանձին պոպուլյացիաների վրա՝ նրանց վիճակը գնահատելու և անհրաժեշտության դեպքում համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:

6. Հազվագյուտ բույսերի խիստ վերահսկված ներմուծում կենցաղ և բազմացում բուսաբանական այգիներում նրանց պահպանման նպատակով:

Գլուխ 6

Էկոլոգիական կրթության արտասուսումնական արտադպրոցական ձևերը



Եզրակացություն

Էկոլոգիան այսօր մարդկության համար կարևոր հիմնախնդիր է, իսկ նրա ուսուցումը դպրոցում՝ անհրաժեշտություն: Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կարգով Էկոլոգիա առարակն այսօր որպես այդպիսին չի դասավանդում, դպրոցում, ուսուցումը իրականացվում է խմբակների միջոցով:

Աշակերտների մեջ Էկոլոգիական հետաքրքրություններ սերմանելու համար անհրաժեշտ են բազմաթիվ միջոցներ, ձևեր, հնարներ: Իսկ Էկոլոգիական գործունեությունը իրականացնելու համար կան մի շարք գործոններ:

Դպրոցականների Էկոլոգիական գործունեության վրա ազդող գործոնները	
Օբյեկտիվ	Սուբյեկտիվ
Հանրապետության շրջակա միջավայրի պայմանները	Էկոլոգիական կրթության համակարգի ձևավորման և զարգացման համար անհրաժեշտ կրթության համակարգի պատրաստվածության մակարդակը:
	Մովորողների հենքային պատրաստվածությունը Էկոլոգիական և բնաճանաչողական գիտելիքների յուրացմանը:
	Մանկավարժական կադրերի Էկոլոգիական պատրաստության մակարդակը:

Պրականության ցանկ

Լ.Թ. Ասատրյան

Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները

Ա.Ս. Սահակյան

Էկոլոգիական դաստիարակության համակարգը ավագ դպրոցում

Լ.Վ Հարությունյան

Էկոլոգիա

Ռ.Հ. Եղոյան

Բնապահպանության դասավանդման մեթոդիկայի և լաբորատոր-գործնական աշխատանքների ձեռնարկ: